ՀՀ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
«ԷՆԵՐԳԱԿԱՐԳԱԲԵՐՈՒՄ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
РА ЗАО «НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ИНСТИТУТ ЭНЕРГЕТИКИ»
ФИЛИАЛ «ЭНЕРГОНАЛАДКА»

0019, Երևան, Այգեձորի փ., 67 ☎ 222 155
ֆաքս՝ 222 545

Армения, Ереван 0019, ул. Айгедзори, 67 ☎ (37410) 222 155
armenergonaladka@gmail.com FAX (37410) 222 545

17.01.22թ. № 02

«ԿՈՆՑԵՌՆ ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

10.12.2019թ. ՆԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/04 Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի (այսուհետ Ընկերություն) և ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի միջև 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված ՆԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/04 «Գազի քրոմատագրաֆի-քրոմատագիր համալիրի մատակարարման» պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1.1 կետով Ընկերությունը պարտավորվել է ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական-բնութագիր գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը: Ապրանքը մատակարարվել է 2020 թվականի մարտի 2-ին, առավելագույն թույլատրվածից 37 օր ուշացումով: Մինչև 2021 թվականի հուլիսի 21-ը (մատակարարումից 507 օր) Վաճառողը կատարել է կարգաբերման աշխատանքներ և այնուհետ պահանջել է ընդունել ապրանքը, ներկայացնելով երեք էջի վրա նամակ և կից 135 թերթից (232 էջ) բաղկացած տարաբնույթ տեխնիկական փաստաթղթերի փաթեթ, որոնցից 42 թերթը եղել են քրոմատագիր սարքի չափումների ելքային արդյունքները: Նշված փաթեթից՝ ըստ դրանցում ընդգրկվածի, ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից ընդունվել են միայն տրանսֆորմատորային յուղում իոնոլի չափումներին վերաբերվող 5 թերթը և իոնոլի չափումների մեթոդիկան՝ բաղկացած 12 թերթից, որոնք իրականում համապատասխանել են քրոմատագիր սարքի վրա կատարված չափումների մեթոդին, իսկ արդյունքներն էլ եղել են կայուն և հավաստի: Փաթեթի մնացած թերթերը որպես ընդունման-հանձնման փաստաթղթային հիմք չի ընդունվել, քանի որ մեթոդիկաները չեն համապատասխանել կամ մասնակիորեն են համապատասխանել քրոմատագիր համալիրի վրա փաստացի կատարվող չափումներին, իսկ չափման արդյունքներն էլ չեն բավարարել Պայմանագրի N1 հավելվածի՝ Տեխնիկական-բնութագրի 2.1÷2.3; 2.5; 2.6 կետերի պահանջներին:

2021 թվականի նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 16-ը Ընկերությունը կատարել է ավարտական վերլուծություններ: 2021 թվականի դեկտեմբերի 20-ին (մատակարարումից 659 օր) Ընկերությունը ներկայացրել է ամփոփիչ վերլուծությունների (չափումների) արդյունքները՝ տրանսֆորմատորային յուղերում բնութագրիչ գազերի մասով՝ 55 հատ ընդհանուր կատարվածից 23 հատ ընտրված արձանագրություններ: Նշված 23 արձանագրություններում առկա են եղել 15 հատ հաշվարկային ալգորիթմների փոփոխություն, և բնականաբար այդ արդյունքները ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից կրկնելի և վերարտադրելի չեն համարվել: Իսկ տրանսֆորմատորային յուղում ջրի քանակի չափումները ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից չեն ընդունվել, որովհետև դրանցում առկա չեն եղել տրանսֆորմատորային յուղում ջրի իրական քանակի ցուցանիշները:

Ընդհանուր առմամբ ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղը գտնում է, որ ամփոփիչ ավարտական վերլուծությունների արդյունքները չեն բավարարում Պայմանագրի N1 հավելվածի՝ Տեխնիկական-բնութագրի 2.1.1, 2.2, 2.3, 2.5 և 2.6 կետերի պահանջներին, որոնց մասին առարկայորեն նշվել է ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից Ընկերությանն ուղղված 2021 թվականի դեկտեմբերի 24-ի №1-10 և 2022 թվականի հունվարի 5-ի №01 նամակներով:

Քանի որ տեխնիկապես հնարավոր չէ կատարել ապրանքի մասնակի ընդունում՝ միայն իոնոլի չափումների մասով՝ Պայմանագրի N1 հավելվածի Տեխնիկական-բնութագրի 2.4 կետ, ապա ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղը Պայմանագիրը միակողմանի լուծում է ամբողջությամբ, Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ սույն ծանուցման հրապարակմամբ:

Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված պայմանագրի ապահովումը (տուժանքի մասին համաձայանգիրը) կից վճարման պահանջագրի հետ միասին կներկայացվի «Ամերիաբանկ» ՓԲԸ, տուժանքի մասին սահմանված գումարը՝ 1224000 ՀՀ դրամ, ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությանը, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմնին:

Հարգանքով՝

Տնօրեն Ա. Բաղդասարյան